


ՀԱՅԿ

Թ. ԴՈՒՐՅԱՆ

ԱԶԵՐԼԵՐ  
ԲԱԳՈՒ - 1934








220



TATUL  
HYRJAN



AZƏRBƏŞƏR  
BAKB-1934



A P M.  
2-1082a

291.99  
h-94

6 NOV 2011


974



ԹԱԹՈՒԼ  
ԳՈՒՐՅԱՆ

4051

Г.П.Б. в Лнгр.  
Az. 1935 г.  
АКТ № 26



ԱԶԵՐԵՆԵՐ  
ԲԱԳՈՒ-1934



Յմբագիր Յե. Չուբար

Շապիկը սուբեր շապիկը  
և ֆարդացը նկարիչ Վ. Պողոսյանի  
ձեւավորում Ա. Արխանի



40578-63

### ՅԵՐԳ ՅԵՐԿՐԻՆ

Ընդունիր յերգը ջանել պոետի,  
Ընդունիր, վորպես նվեր մի հետին.  
Նա մեծացել է քա շնչով հրե  
Յեկ քա մասին է յերգերը գրել:

Ընդունիր յերկիր ու յեղիր ներով,  
Պոետը կանի, դեռ իր յերգերով  
Կերգի քա մասին հաղթակա՛ն, անպարս...  
Մրանով միայն փնտռում է համբան  
Ավելի հաստատ, ավելի զորեղ  
Յեկ շնչով կիզիչ, վորպես միջուրե:

1933 թ. դեկտեմբեր  
Բազու.

ՅԵՐԳԵՐ ՄԱՀԻ ՄԱՍԻՆ

## Ա. Զ. Դ. Ա. Ր. Ա. Ր.

Լեռներից ցած ե ընկնում թևատարած մի արծիվ  
Յեվ արյունը մնում ե գորշ քարերի շերտերում.-  
Յերբ թշնամին նորից նոր մահ ու կռիվ արծարծի,  
Մենք դուրս կգանք նրա դեմ համառ կռվով աններում:

Մահը շողա թող աչքիս և արյունը ցնցունդով  
Յերակներս վողողե, յերգ ե բույրը վառողի.  
Գանգս ցրի թող անհետ բազմատարած խաչուղում  
Յեվ արևը թող կապե արնաշաղախ իր գոտին:

Հիմա կապված մեր հողին ու զավոդին ու շախտին  
Մեր ուժերն ենք կուտակում վերջնական մարտի համար,  
Մենք գիտենք.— մեր բանակը այս կռվում ել կհաղթի  
Յեվ արևը կիայլի կատարներից ամպամած . . . :

## Մ. Ա. Հ. Ե. Ր.

Յես գիտեմ, վոր արեվը յելնում ե արեվելքից  
Յեվ Ղրիմում ամառը նույնիսկ հով ե,  
Վոր Յեվրոպայից մեզ բաժանում ե մի կարմիր գիծ  
Յեվ «Վոլգան թափվում ե Կասպիական ծովը»:

Յեվ Ամուսկոսենն ե յերկար տարիներից հետո  
Վերջապես թռել հյուսիսային բեվեռը,  
Լեվինսոնն ե ամբողջ տայգան կտրել վոտով  
Յեվ Նետտեն ե խորհրդային պոստում մեռել:

Վլադիմիրն ե ատրճանակը դրել ճակատին,  
Սերգեյը կախվել ե առաստաղից  
Յեվ Կասպիական ավազներում ցուրտ ու աղի  
Գսանվեցին խփել են ուղիղ ճակատից:

Յես գիտեմ յեվ ասում եմ իմ ճանապարհին.  
Զինվորի պես մեռիք, Նետտեյի պես պոստում,  
Թող յերկրիդ աճումը շուրջդ պարի,  
Վորպես չեղած յերգի հրաշագործ խոստում:



### ՅԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ծովից գոլորշին ե յեղնում առավոտյան դեմ,  
Կապույտ գլխարկ ծովերի վրա.—  
Յերկիր իմ, քո սրտին յես կապված եմ անթեղ  
Յեվ յերգերս ամբողջ քո արյունով գրած:

Յեվ յեթե յերերամ, ընկնեմ ճամբիդ յերկար,  
Անտեղի բեռ լինեմ, մաքով սնանկ,  
Դու ճգմիր ինձ թաթերով քո յերկաթ  
Յեվ քո յերթը այս, թող հաստատորեն գնա:

### ՀԵՏՔԸ

Ահա ծոփն ե այսպես ձգվում, կատարները ջրի  
Կապույտ ֆոնի վրա վիշկաներ են բարձրացել,  
Մեկը յեղնում ե, վոր ծանր խավարը ցրի  
Մակայն տանում ե իր հետ մի արնոտ ձեռ:

Վորպես պայքարատենչ վոգու նշան  
Միակ ձեռքը հանած ծովի կատարներից,  
Կարողությամբ սակայն հաղթանակը նշած,  
Միակ ձեռքով անգամ թշնամու չի ների:

Թող Դոնը վարարի, յելնի իր ամերից,  
Վուզան անշեղ թափվի կասպիական ծովը,  
Դնեպըը ցասկոտ պարոգները քերի  
Յեվ Ղրեմը շոյի դույզ ծովերի հովը:

Դու քիչ ես ջանացել. հիմա ավել յեռանդ,  
Ավել կալորիաներ քրտինքի ու տապի.  
Ամեն աճին յերկրիդ դու յեռանդով յեռա  
Յեվ յերկրիդ համար դու արյունդ թափիր:

Դու տասյերկու թվի ծնված բանակային,  
Հրացանը ձեռքիդ խորաքանդ դիրքերում,  
Խորհրդային անեզր սահմաններին նայիր  
Յեվ ընկիր գնդակից վրեժով աններում:

Թող քեզ դիրք դարձնեն ընկերներդ մարտիկ,  
Թիկունքիդ վրայով գնդակները վռոճան.  
—Վողջնւյն մեր զալիքի, մեր վերջնական մարտին,  
Արյան հաղթանակով դրոշներին հառնած:

Շրջեց մեկը յերկար այս ամերի մոտով,  
Ճերմակ մազերի վրա Ջապարոթյան փոշին,  
Դնեպրն եր հոսում զավոզների տոթով,  
Դնեպրոստրոյը, վորպես շքանշան դոշին:


Թափառել ե այստեղ, նա յերկար տարիներ,  
Ապստամբել, յելել, տիրողների հանդեպ,  
Ազատության մասին անթիվ յերգ հորինել,  
Հետեվում թողնելով կախազան ու բանտեր:

Նա յերկար նայում ե ջրերին փրփրած,  
Յեվ ուռչում ե սիրտը ամեն քայլափոխին.  
Նա ինքն ել դուրս յեկավ, վոր յերկիրը փոխի,  
Սակայն մնաց կառչած բարեկառի վրա:

40578-67



**ՅԵՐԳԵՐ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ**



Ն Ա Մ Ա Կ

Կապույտ ծուխն ե յելնում ահա վեր,  
Քամին քո մազերն ե անողոք ցրում.  
Դու դարձել ես հիմա ինձ համար զրույց  
Յեվ ել վոչինչ չունես խանդոտ ու վեհ:

Ձյունն ե արդեն նստում կատարներին  
Յեվ անցած գարունը ել յե՞րբ կդառնա.  
Սիրելի բարեկամ այս անգամ ինձ ներիր,  
Յեթե հեռուններից յես չվերադառնամ:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ Ի Յ Դ Ո Ւ Ր Ս

Յեվ մի Նորա, մի Վարդուհի, մի Քնարիկ,  
Հոգուդ վարսերիցը կախվեն, յեթե քո,  
Դու ղեկը դարձրու լիրիքական քնարիդ  
Յեվ դեմ դուրս յեկ նրանց ամբողջ բանակով:

Հասկանում ես հիմա «սեր-կոչյալի» լեզուն  
Յեվ դեմքդ սափրում ես ել վոչ հաճախակի,  
Հասկանում ես մեր ծովերը ով ե հուզում  
Յեվ ծովերի վրա անթիվ ականակիր:

Յեվ զինվոր ես արդեն դու քո յերկրի համար,  
Սերդ ուրիշ ուղիներով ե բարձրանում,  
Յերբ նայում են արկերը մուլթ ու ամպամած,—  
Սահմաններիդ վրա թշնամական անուն:

Դու զինվոր ես յեվ վերջ: Կապված յերկրիդ գարկին,  
Շնչափողդ նրա յերակը դարձրած.  
—Վոչ մի Նորա արդեն քո յերգերի վրա  
Ի՞ր ձեռքը չի կարող սիրով գարկի:

Կ Ս Ր Ո Տ

Չյունը նստում է ծառերին ու տանիքներին,  
 Ծիւնեւոյգնեբրից յելնում է կապույտ ծուխը,  
 Հետո գիշերն է ծանրանում, յեւ սեւ յեւ ածուխէ  
 Յեւ ուզում է գետնից ամեն լույս, շող քերի:

Այն ժամ լույսն է վառվում քո պատուհանի  
 Յեւ ճերմակ վարագույրն իջնում է դանդաղ,  
 Յես մոտենում եմ արդեն փողոցներով հանդարտ  
 Պատուհանիդ . . .

Յես գործից եմ գալիս, ծանր հոգնածորեն,  
 Ցուցամատով հագիւմ խփում ապակունն,  
 Ճակտից իմ քրտինքն է առու-առու ծորել,  
 Սակայն քեզ հիշել եմ իմ հույզերում թաքուն:

Ն Ս Մ Ս Կ

Աղջիկ իմ քեզ նամակ,  
 Զինվոր այն տղայից,  
 Վորի յերգի համար  
 Յեւ նուրբ է ջղային  
 Դու գիշերը լացիբ  
 Կապույտ արտասուքով  
 Յեւ թախծեց ակացին  
 Քո պատուհանի քով:

Նա զինվոր է հիմա  
 Յեւ յերկիրն է պահում.  
 Դու աղջիկ իմ հիմար  
 Ամեն հարմար պահուն  
 Նախատում ես նրան,  
 Վոր շուտ վերագաննա  
 Յեւ կոպերիդ վրա  
 Արտասուքը բառնած . . .

Վաղը արե կանի,  
 Իմ լնւմ, իմ լւմ հիմար  
 Յեւ հեռու սահմանից  
 Կվերագաննա նա . . .  
 Վաղը կգա կրկին  
 Յերկրի պահակն արթուն,  
 Քեզ նուրբ, նուրբ կզրկի,—  
 Կծպտաս—դու . . .

Այժմ միայն նամակ  
Զինվոր այն տղայից,  
Վորի յերգի համար  
Յեվ նուրբ և ջղային  
Դու զիշերը լացիր  
Կապույտ արտասուքով  
Յեվ թախծեց ակացին  
Քո պատուհանի քով:

ԳՈՒ ՄԵՌԱՐ ԱՂԶԻԿ ԻՄ

Девушка, что пела у заставы  
Может быть сегодня умерла

В. Саянов

Յես հիշեցի այսոր քո մասին  
Յեվ ժպիտը ծածկեց իմ դեմքի կաշին.  
Յեղել է, կախվել եմ քո մեն մի մազից,  
Թողել եմ, վոր սիրտս ծանրությունն այդ քաշի:

Քսան տարեկան ես, դժվար հանգիստ նստես,  
Վերմակիդ գույներից աղջկա դեմք է գծվում.  
Այստեղ ձյունն է նստում, և քամին է այստեղ  
Ծառերի չորացած տերևները կրծում:

Այդպես քամու բերնով, տերևների նման  
Դու փախար իմ սրտից...  
Յես յերգում եմ աճող կյանքի գովքը հիմա,  
Վոր չդողա յերգս ել ձմեռվա ցրտի:

Դու հիշում ես կարծեմ հանդիպումը մեր լուռ,  
Ինչ վոր բաց ալլեյում, ծառերի կողքին,  
Յերբ արևն եր դանդաղ շողերով մեռնում  
Յեվ գողում եր ոգը նրա վերջին շողքից:

Բայց արևը վաղը կրկին կյանք կառնի,  
Դու մեռար աղջիկ իմ, յերեկ առավոտուն.  
Ե՛խ, արևը վաղը խնդությամբ կհառնի  
Յեվ կցնձա յերգը վոսկեջրած ոգում:

## Հ Ո Ւ Շ Ե Ր

Քսան տարին մարգու, յերբ թռչում է արագ,  
Յերակներում արյունն է յեռում դաժանորեն.  
Արտերում խշշում է վոսկեգուշն ցորեն  
Յեվ ծառերն են շրշում ջրերի վրա:

Եխ, սիրել եմ յես քեզ մի որ գարնամուտին,  
Յերբ արեն է նայել ձյունոտ լեռան ուսից.  
Այս ջրերի կողքին, այս ծառերին մոտիկ,  
Մենք բացել ենք իրար ու սեր ու սիրտ:

Հիմա ձյունն է նստել: Քո հասցին ուր նայեմ,  
Յեվ վնչ մի հեռախոս քեզ չի զանգահարի,  
Ինչքան ել հուշերն այն իմ սիրտը հմայեն  
Յեվ խոսքերդ հնչեն մեղմ ու բարի:

## Բ Ա Մ Բ Ա Ս Ա Ն Ք

Դու կարող ես նայել զույգ ապակու տակով,  
Այն ինչ յես հաշվում եմ անցյալ,  
Սիրել հույզերիդ մեջ մի տղայի թագուն,  
Վոր սե մազեր ունի և աչքեր պայծառ.

Դու կարող ես նայել: Մակայն հիմա աշուն  
Յեվ կրքեր ու գրգիռ և մրգեր ու արև  
Յեվ չես փրկի վոչինչ խոսքերով անշուք,—  
Այն ինչ անցյալ դառավ, յերբեք չպայծառեց:



Յ Ե Վ Ա.

Ева, первая женщина...  
Г. Фатуев.

Դու խլեցիր Յեվա, բարիքը աշխարհի,  
Յեղար անթիվ մարդկանց թշվառության պատճառ  
Յեվ ծաղկած աշխարհը փոխեցիր չոր քարի-  
Յեվա, դաժան յեղար, ու չարագործ անչափ:

Յեվա, առաջին կին, գայթակղիչ բաժակ,  
Քեզ ըմպել են անթիվ խրատճանները դեմ.-  
Յեվ դարձել են մեկին և՛ հարբած և՛ դաժան,  
Յեվա, յերբ մարմինդ են կույր աչքերով դիտել:

Յեվա, լաված հեքյաթ, Յեվա, միֆ ու լեգենդ,-  
Սակայն դու ապրում ես և կլինես դարեր... —  
Այն որվանից, յերբ մենք պատմություն ենք բեկել  
Յեվ յերկրի վրա արևը պայծառեց,

Դու չկաս, դու մեռար մեր սրտերից հավետ,  
Քո միրաժը ցնդեց, վորպես վառողի բույր,  
Քո անունից դրդված մենք չենք լարում դավեր,  
Քո պատկերի առաջ չենք շոայլում համբույր:

Վոչ մի Ադամ հիմա ծունկ չի իջնի քո դեմ,  
Վեչ մի դրախտ քո դեմ չի բացի դռները, —  
Մեր յերկրում չունենք վոչ մի նման կողեկս,  
Վոր մի եջում, մի կետ բողոքի մեռնելը:



Յ Ե Վ Ն Ա.

Где хорамы армий победа запета,  
Где эре Христа предявляется счет...  
И. Сельвинский

Այն ծեր տրուբադուրն է պատմում կրկին  
Յելենա, քո մասին հեքյաթներն իր,  
Տրուբադուրը այն ծեր ու աստվածը յերգի,  
Վորը մինչև մահի մահը դեռ չի մեռնի:

Ո՛, չքնաղ Յելենա, Տրոյան քեզ համար  
Մոխիր դարձրին, տվին հողմերին ու քամուն,  
Նրա յերգը մնաց, սակայն, վորպես կամար  
Աշխարհի մի ծայրից մյուսը հաղթ, ամուր:

Անգին սագերն անգամ ազատեցին յերկիր,  
Իսկ դու պատճառ դառար մի յերկրի կործանման.  
Նրա յերգն է հոսում ու կարկաչը յերգի  
Կմնա մեր սրտում անմահությամբ անմահ... —

Հեկտորն ընկավ կովում, ու հաղթ Աքիլլեսն ու  
Վոդիսեվսն իմաստուն նվաճեցին յերկիր. —  
Քեզ համար Յելենա բաժակներ են լեցնում,  
Փառաբանում ձեռքը արյունածոր վերքի:

Դու անպատիժ հիմա ապրում ես մեծ յերգում,  
Լեգենդական Հելլեն, դահիճների-դահիճ.  
Նրա պայծառ յերգն է դեռ պատիժից փրկում,  
Վոր քեզ չհանձնն մոռացումին, մահին:



Ա Ն Ե Լ Յ Ա

Сегодня утром Анеля  
умерла...

Г. Сенкевич

Այսօր առավոտյան մեռավ Անելյան,  
Տանը սուգ արեցին, տանը առատ արցունք.  
Քեզ մահը շուտ զարկեց, Անելյա, Անելյա,  
Բայց անունդ մնաց, վորպես անջինջ հարցում:

Ո՞վ է այդպես, այդպես իր մահը վողբացել  
Յեվ կույր աչքը բացել արևի առաջ:  
Անելյա, քեզ համար ջինջ աչքեր են թացել  
Յեվ ո՞՞՞՞ են դեմքդ արցունքները առատ:

Այն մեծ նկարիչի կտավների ֆոնին  
Քո քանդակն է մնում վառ գույներով հարուստ.  
Այն արևն է նայում կապույտ հորիզոնից,  
Այն ցողերն են մեղմիվ թփուտներում պարում,

Այն շրջում են կապույտ շուշանները արտում,  
Այն հովն է թափառում ծաղիկների վրա.  
Անելյա, դու մեռար կարմրածուփ առտուն  
Յեվ քո մասին մնաց այն մեծ յերգը գրած:

Ռ Ա Ի Ս Ա Ռ Ի Թ Ի Կ

Имя ее входит в социализм.

И Сельвинский

Նրա համար վոչ մի Տրոյա չայրեցին,  
Նա իր կյանքում չեղավ թշվառության պատճառ:—  
Նա զավոդ եր գնում առավոտը վեցից,  
Աշխատում մինչ գիշեր ու հոգնում եր անչափ:

Մի տղայի սիրեց իր հույզերում թագուն,—  
Նրան, գինվոր տարան ու նա կովից չեկավ:—  
Մայրն եր ծանր վշտից հեծում, աղաղակում  
Գլուխը կարիքի հողմերի դեմ թեքած:

Այսպես որեր անցան: Նա մեծացավ ելի  
Յեվ հասկացավ կյանքում ինչը պետք է փոխել,  
Ի՞նչպես պետք է դուրս գալ դժվարության յելից,  
Վոր չտանեն հորը, քաղցից մեռնի խոխեն:

Նա հասկացավ. հետո հրացանը ուսած  
Մեծ շարքերում կանգնեց, պարտիզան ու մարտիկ.  
Վնչ վոքից չպետք է փրկությունը հուսալ,  
Ի՞նչի վոր ձեռք ունի, պետքական մեծ մարտին:

Նա գլուխը անցավ ջոկատների կարմիր  
Յեվ Սիբիրից յելան, արշավեցին առաջ.  
Պուրզան սողոսկում եր, սառեցնում մարմին,—  
Նրանք փոխում եյին նոր դիրքերը առած:

Սողում եյին առաջ պարտիզաններն անահ,  
Ռախսան անվրեպ կրակում եր արի,  
Վոր յերկրի առաջ նորից չբարձրանան,  
Հազար ճերմակ թաթեր, հազար տեր ու կարիք:—

Վոր տղային նորից կովի դաշտ չտանեն,  
Վոր չմեռնի մայրը սուր կարիքին գերի,  
Վոր չմնա կյանքը մահու ձեռին անել  
Յեվ արյունը հոսի յերկրի լայն թռքերից:

Նա ջոկատն իր տարավ վտանգների միջով,  
Հյուսիսյան ցրտաշունչ յերկնքի տակ.  
Յեվ կովեց աննահանջ, անողորմ, անզիջող,  
Զխնայեց արյուն, չխնայեց գնդակ:

Յեվ ընկերներ ընկան շառաչող գնդակից,  
Հետո ձյունը ծածկեց դիակները նրանց.  
Քամին վախով հեծեց, վորպես մոլոր ֆաքիր  
Յեվ մահը տարածվեց ցուրտ դաշտերի վրա:

Սովսծ, վոտաբորիկ նրանք առաջ անցան,  
Նրանք արյուն տվին անսանձ վոխով լեցուն,  
Ճակատներին, քունքին, կարմիր վերքեր ընծա,—  
Մահը դաժան ու չար, մահը աչքերով ցուրտ:—

Վոր նայում եր ամեն կիրճից ու անտառից,  
Վոր վայում եր դաժան լայն դաշտերի վրա,  
Վարկյանը մահու չափ ծանր ու մահառիթ,  
Բախտը ամեն մեկի իր ճակատում գրած:

Յեվ դիրքերից՝ նոր դիրք ու ճակատից՝ ճակատ  
Նվազում եր խումբը ու զոհեր եր տալիս,  
Անունները սակայն պայքարում հռչակած  
Յեվ շուրթերում յերզը փրկարար ու գալիք:

Պուրզան դաժան, պուրզան տայզաներում անծայր,  
Հսկա քուլաներով ծածկում ե ամեն գիծ,  
Զնջում մի վարկյանում ճանապարհը անցած—  
Պուրզան տայագներում ու սարսափն ամենքի:

Ճերմակների բանդան թափառում ե այստեղ,  
Պետք ե հասնել նրանց ու հարվածել ուղիղ:—  
Ճերմակ հողմը սակայն կորցրել ե ուղին,  
Հերոսների թափն ու ենտուզիագմը սաստել:

Ճարճատում են հսկա ծառերը արմատից:  
Կտորատվում են, թափվում, մռնչում են անեղ:  
Նրանք ճիգ են անում, թավալում են գետին  
Յեվ քշում ե հողմը կորցնում ե անհետ:

Յեվ յերեք որ հողմը տիրապետող յեղավ,  
Յեվ յերեք որ վայեց անտառների վրա,  
Յեվ յերեք որ նրանք լուռ անձնատուր յեղան  
Յեվ յերեք որ քաղցած մաքառեցին նրանք:

Զորրորդ լուսաբացին, յերբ հողմը դադարեց,  
Ռախսան նորից խուրը հանեց վոտի,  
Մինչեվ վախճան տանել անողոք պայքարը—  
Ինչքան մարտիկների մահը լինի մոտիկ:

Նորից ճակատ-ճակատ յելան թշնամու դեմ,  
Նորից զոհեր տվին համառ ու անխորտակ,  
Յեվ նոսրացան նրանց շարքերը յերկաթե  
Յեվ ուժն իր դեմ տվեց ճերմակների հորդան.

Վնչ մի տեղից նրանք ոգնություն չստացան, —  
Վերջին ուժը լարած գազազած թշնամին  
Մտել եր հողի խոր յերակները բացած  
Յեվ մաղում եր անթեք արճիճների քամին:

Վորոշված եւ Վոչ մի նահանջ: Յեւ թշնամու  
Գնդակների առաջ բաց են անում կրակ.  
Մահը գերանդում եւ աչքերով իր տամուկ  
Յեւ դիակներ թողնում խրամների վրա:

Առաջ, առաջ ... առաջ ... Ռահման արի  
Բունքի վերքը բռնած կրակում եր խանդով,—  
եւ վերադարձ չկա կիսատ ճանապարհից,  
եւ փրկութիւն չկա թնդանոթից քանդող:

Վոչ վոք չհանձնվեց: Մինչեւ վերջին մարդը  
Նրանք պատվով ընկան խորաքանդ դիրքերում,  
Ճակատները այն սեզ, հասակները պարթեւ  
Յեւ շուրթերում յերզը փառավոր, աններում ...

Վոչ մի շունչ չմնաց նրանցից կենդանի,  
Պատուած դրոշակը արնոտ մահերգ լացեց,—  
Յերկրի լուսաբացին մի խիզախ ընտանիք  
Իր մուգ արնով ճերմակ ձյան շեղջերը թացեց:

Սակայն նրա մասին, այն ղեկավար կնոջ  
Բյուր յերգեր կապեցին, անմահ, հերոսական,  
Վորը կյանքը փրկեց իր արյունի գնով,  
Դասակարգի գործը պատվով տարավ սակայն:

Տայգաներում վայեց քամին հազար բերան  
Դրոշները անթիվ ծառացան փրկարար  
Յեւ յերկրում տոնեց կյանքը մի նոր երա,  
Խնդութիւնը հոսեց յերակներում վարար ...

\* \* \*

Յես իմ յերզը մինչեւ գետին եմ ցած բերում,  
Խոնարհում եմ նրանց շիրիմների վրա,  
Վորոնք դասակարգի վրեժը բիրերում  
Փառքով ընդունեցին հազար մահ ու կրակ ...:

ԽԱՌԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ն Ա Խ Ա Ն Ձ Ը

Սիրով Յե. Չարեցցի

*Որք բացվում, ե, ծանր հոգնածորեն  
Ավելի բարդ,  
Բան Պատահական, քան Խլեքնիկով...  
Թող յերգերդ այսոր արծաթաձայն ծորեն  
Յեվ նախանձի յերգիդ մի Ասեյեմ Նիկոլ:*

## Վ Ե Ր Հ Ո Ւ Շ

Գիշերը հանում է գլխարկը սեւ  
Յեւ թափում է մազերը յերեսին,  
Յես ինչքան այսպիսի գիշերներ եմ տեսել  
Յեւ փախել, յեկել գիշերվա կեսից:

Բուքը վոռնացել է իմ հետեւում,  
Ձյունը կամրջել է անթիվ խրամ,  
Բայց այդ յերկար հո՛ չի՛ տեւում,  
Վոր անձնատուր լինես նրան:

Յես թողել եմ ամեն ինչ անիմաստ  
Յեւ բանակն իմ տարել է հաղթանակ,—  
Ահա հաղթության իմ դրոշները հիմա,  
Ահա յերգերը իմ գրոհներով անահ:

## Ձ Ո Ն

Ուկրայնական լայնություն, Ուկրայնական յերկինք,  
Դնեպրը քո մեջքին, վորպես գոտի—  
Բո շախտերին, դոմնաներին յերգն իմ  
Յեւ վողջույնս յերկաթափայլ առավոտիդ:

Վողջույնս դաշտերիդ պղնձե ու հասուն,  
Շախտյորներիդ յերթին՝ յեւ վեհ՝ յեւ փառավոր,  
Վորոնք աշխատանքի յերգն են մկաններով ասում,  
Պոյեմներ են գրում վաստակի ծարավով:

Վորոնք ուսերին տանում են մի փառավոր ներկա,  
Պատվի գործն է նրանց մղում աշխատանքի,—  
Դնեպրը ձգվող քո դաշտերով յերկար  
Յեւ Դնեպրգետը ձեր վաստակը անգին:

Ի Ա Ղ Ձ Ա Ն Ք

Հուսինը, վորպես քայլող պահակ,  
Վոր քայլում է ձնե վերարկու հագած.—  
Այդպես խնդությունն իմ սրտում պահած  
Այդ լուսնի նման յես ճամբա ընկա:

Յե՛վ վերեից ինչեր հտեսա,  
Աչքերս հոգնեցին անթարթ նայելուց  
Այդ իմ դեմքն եր ձգվել բեկված հայելում,  
Վորպես մի հեքյաթի-պատկեր-վաղուց լսած:

Ձ Ո Ն Ը

Յերեկոն, վորպես կապույտ կլիոնկա  
Մեղմ ալիքվում է տանիքների ֆոնին.  
Յես տունն եմ դառնում վաստակի քրտինքով  
Յե՛վ ուզում եմ քրտինքս քո խինդին ձնել:

Վոր դու զգաս նրա քաղցրությունը ծանր,  
Կովում պատրաստ լինես, զգաստ, արթուն,  
Վորպես այն զինվորն է, ձեռքում հրացանը  
Իր յերկրի անշեղ ճանապարհը հարթում:

## ԱՆՁՆՎԻՐՈՒԹՅՈՒՆ

Արվարձանների վրա նստում ե դեղին վռակի,  
Յերբ արեվը յեջնում ե փառավոր հորիզոնից.  
Դու փնտռում ես լեռներ պղնձազույն խոսքի  
Յեվ տերմիններ անմահ չանհետացող ձոնի:

Դարը տվել ե քեզ յեռանդ ու ձիրք մարդու  
Յեվ կյանքի մեջ քո նոր, մի եջ ե վեր հանել,  
Ինչ վոր ունես պահած, այս կյանքին տուր,  
Վոր յերկրիդ զրոշակը վեհությամբ տանես:

## ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Տրիտեաներով, գազելներով դու չես փրկի վոչինչ,  
Տուր յերկրին քո ուրիշ յերգ ու հղացում,  
Դու գործած կլինես աղաղակող վոճիր  
Յեվ յերգերիդ վրա կնստի թուխս ու ձյուն,

Յեթե յերկրիդ համար չտոկաս դու անքուն,  
Յերգիդ հանգ չգարձես ամեն տրոփող յերակ,  
Նրանց մասին, վորոնք ճակատում են հանքում  
Յերկաթի, չուգունի դեմ պայքարի յելած:

Վորոնք ճակատ-ճակատի յեն յելել գազերի դեմ  
Յեվ արյուն են տվել քո փրկության համար,  
Յեվ կթափեն արյուն նրանք նորից, յեթե  
Դո յերկրին նայեն արկերը ամպամած:

## Ճ Ա Մ Բ Ո Ր Դ Ը

Յեվ լուսինն եր ինձ ուղեկցում,  
Ճամբաներով վոլոր, յերբ քայլում եյի  
Յեվ աչքերն իմ քաղցից փայլում էյին,  
Իսկ մեկը նայում եր չոր ու կծու:

Ճամբան յերկար եր, ծուխն եր չոքում  
Հորիզոնի վրա անափ իջած,  
Սակայն խնդությունն եր կուտակված իմ հոգում  
Յեվ կանչում եր հեովից մի յերկաթե շշակ:

## Ո Ի Շ Ա Յ Ա Ն Մ Յ Ե Բ Դ

Ո՛վ ե հմայվել իմ յերգով,  
Ո՛վ ե տեսել ինքը իրեն,  
Ո՛վ ե այնքան արնով գրել  
Յեվ ուռճացել ինքն իր ներքո...

Յես դուրս յեկա, յերբ փողոցում  
Գնդակի ձայնն արդեն դադարել եր,  
Յերբ հալվել էյին կատարները  
Յեվ կանաչել ծառերը դողացող:



Կ Ա Մ Ք Ը

Խոսքը վճռական է, վորպես  
Ծովային կապիտանի հրամանը.  
Առագաստներդ հավաքիր, վարպետ-  
Կրեյսերի լույսը քեզ չի տեսել քանի:

Նա քեզ փնտռում է նայիր ահա, ահա  
Խաչածեփում են իրար լուսարձակները,  
— Իսկ դու քո աչքերում մի վոխ պահած  
Այդ վտանգի ու մահի դեմ աներիք էս:

Ջ Ա Ն Ք Ը

Տեղի, ժամանակի ու թվերի լեզուն,  
Հարկավոր է դտնել արյունած մատներով  
Յեվ չվատնել տված ժամանակը իզուր,  
Վորպես կատարինե, կամ ահավոր ներոն:

Վոր մեկը քաղաքն է այրել յերգ զրելու,  
Մեկը «հղփացել է տարիներ, տարիներ. . .»

. . . . .  
Դու վոչ ներոն ես, վոչ կատարինե:

## Ի Բ Ա Ր Ժ Ա Ն Ք Ը

Վ. Նորենցին

Դու վոչ Փարիզն ես այրել քո կյանքում,  
Վոչ Դրայդեր ես, վոչ ել Դոս-Պասոս  
Քո ուժերի չափ քրտնել ես անքուն-  
Յե՛վ յերկրիդ յերզն ես պարզորոշ ասում:

Այնտեղ յերգում ե մի կոտրած գիտար,  
Կոշիկ ու սեր ե մաշում մի պոեա.  
Քո յերկրի գործին դու հլու, գիտակ  
Կառուցիք անքուն յերգեր ու պոեմ:

ՄԱՐԿՆԵՐ

## Յ Ե Ր Գ Վ Ա Ր Պ Ե Տ Ի Ն

Դու քո ճանապարհին չես հանդիպել մեկին,  
Վոր յերգերդ այնքան կարոտով վեր հանի,  
Ինչպես այդ նայիրցի պոետը վեհանիստ,—

Վոր Ղարսում թողել ե մանկությունը կապույտ,  
Հայրենիքն հանձնել ե մահի ու կործանման,  
Եպոխայի մասին պոեմներ ե կապում,  
Ֆրագմենտներ, յերգեր, փառավոր ու անմահ:

## Մ Ո Ն Ո Ւ Մ Ե Ն Տ Ը

### Վ. Մայակովսկուհ

Он... Иенсчерпаемый, как Черное море  
нагроможденный, точно Кавказ...

*И. Сельвинский*

Կանցնեն դարեր ու դարեր  
Յեզ անունդ չի մարի.  
Դու կնայես կապարե  
Քո յերգերի կատարից:

Յեզ չի ցնդի նա յերկար  
Մեծ լենինյան աշխարհից,  
Վորպես անեղ նախերգանք  
Մեծ եպոսի, մեծ դարի:

Դու գլխավար յերգի,  
Անդամանդե մոնումենտ,  
Դու յերգերի ջահակիր—  
Քո թարմ շունչը մնում է...

## Խ Ր Ա Ե Ո Ւ Ս Ա Ն Ք

Առավոտից առավոտ  
Յեզ գիշերից գիշեր,  
Յերգիր յերգդ փառավոր  
Ու հավատով անշեղ:

Լցված կյանքի քաղցրությամբ,  
Հարազատ քո յերկրին,  
Վնչ մի, վնչ մի քույր ամպ  
Թող միաքղ չգրկի:

Դու մի անտեր մանուկ,  
Հիմա յերգով աճած —  
Լծված գործին հանուր  
Մեր ար՝ ով նվաճած:

Յեզ գիշերից գիշեր,  
Առավոտից առավոտ  
Դու հավատով անշեղ  
Յերգիր յերգդ փառավոր:

## ՅԵՐԳ—ՄԻ ՅԵՐԳԻ ՄԱՍԻՆ

— Յես մի աղջիկ եմ սիրել,  
(Անունը հվ գիտե...)  
Լուսաբացի ջինջ սիրեն,  
Աչքերը ջինջ յեթեր...

Այսպես յերգեց մի որ նա  
Յեվ հուշ դարձավ գնաց,  
Քամին դրսում վոռնաց,  
Վորպես բեկված քնար:

Քամին ահով փախավ  
Պատուհանի տակով,  
Մեր որերում ախար  
Ո՞ւմ սիրտն ե նա թակում...

Յերգը մնաց կախած  
Այն պոետի-պատից,  
Վողջույն, սակայն յերգին  
Այդ-հարգանք ու պատիվ:

## ՅԵՐԳ—ԻՆՁ ՀԱՄԱՐ

Վնչ մի բարդի քեզ համար  
Սրբություն չի յեղել,  
Պատուհանիդ տակ կամաց  
Զի ձայնել թիթեղ:

Յեվ լուսինը չի կախվել  
Քո՞ և վնչ մի հանգից  
Ու կարոտդ չի ծախվել  
Փայլով թանգ ու անգին:

Քո վորոնման ճամբեքին  
Յեվ բարդի և լուսին,  
Բայց յերգդ թող չթեքի  
Գլուխը վար ուսից:

Դու հավատով տար անշեղ  
Յերգիդ դրոշակը,  
Տես արևը վեր քաշեց—  
Ուղիդ վորոշած ե...

3

Յ Ե Ր Գ — Գ. Մ Ա Հ Ա Ր Ո Ւ Ն

Քամին յերգի թող դրսոււմ,  
Հողմը շաչե կամաց,  
Ել չես զգա դու քուրսու  
Բույրը ակամա:

Բարդին ել չի շնջա,  
Աքասին չի նազի  
Յեվ կատուն չի ննջալ  
Մամուցով հազիվ:

Յեվ ուռենին հին գահից  
Ճակատդ չի շոյի  
Յեվ լուսինը չի նայի  
Յեսենինյան բոյիդ: —

Վարպետ-յերգի ու խոսքի,  
Փրկիւր կյանքի գինը  
Յեվ արևի վոսկին,  
Վոր թանգ ու անգին ե...

Հ Յ Ո Ւ Ր Ը

Վորպես անկոչ հյուր գալիս ես գիշերով,  
Յես քեզ ինչպես քշեմ իմ տանից.  
Յեվ քո հին զրույցը կրկին հիշելով  
Նորից աղոթում եմ չար սատանին: —

Վոր գարունը, յերբ վոր ճամբաներին նայի  
Յեվ ձյունը ջուր դառնա, հոսի առուններով, —  
Յերգով ու խնդությամբ հուռթի, ամառային —  
Դու ավերող չլինես, վորպես Ներոն:

## ՅԵՐԳ ԳՐՎԱԾ ԳԻՇԵՐԸ

Այս իմ սեղանն է, այս իմ ետաժերկան,  
Դեմից գրքերի ծանր հայացքը.

Ձմրան գիշերն է փաթաթվում յերկար  
Ու սև թիկնոցում.

Ձյունը լցնում է անթիվ բաց անցքեր:

Տաներկու ժամն է: Հիմա փողոցում

Մեկը վոտքերն է փոխում ահամա

Յեվ ձյունն է նրա բաց դեմքը կոծում

Անողորմաբար,

Յերկինքն է վերից խնդում ամպամած:

Փնտուում է տունը նա անփուլթորեն,

Ամեն փակ դռան բռունցքում ամուր...

Գինին խեղդում է կոկորդր զորեղ,

Գանգում շողշողում

Լույսերը դեղին, փողոցը տամուկ:—

Յես իմ տան դուռը դեռ չեմ մոռացել

Յեվ պարտքս գիտեմ յերկրիս հանդեպ:

Քայլում եմ թեպետ մերթ-մերթ կորածն

Ու զիզազորեն,

Սակայն կապված եմ յերկրիս անթել...

## Ի Ն Ք Ը—Ի Ր Ե Ն

Դու ուշագիւր յեղիւր քո յերգերի համար  
Յեվ հոգատար, ինչպես Մաքսիմ Գորկին,  
Թող թախիժը անգույն, մոայլ ու ամպամած  
Քո յերգերի կանաչ արմատը չգրկի:

2004

## ՎՈՐՊԵՍ ՏԱՐԻՆԵՐ ՄԱՇԱԾ ՎԵՐԱՐԿՈՒ

Վորպես տարիներ մաշած վերարկու,  
Վորին շրջելով հագնում են կրկին,—  
Ե՛հ, դու ճառում ես միշտ միևնույն գրքից

Յե՛վ պաղ քրտինքն է քո ճակատին պակու՛մ,  
Դու հավատում ես քո ասած ճառին  
Հայհոյում մարդկանց առանց պատճառի:



ՈՐԸ ՄԹՆՈՒՄ Ե

Որը մթնում է լույսերը վառիր  
Ճակատ ճակատի նստենք ու խոսենք.  
Քանի տարի յե այն որից հոսել,

Յերը անցնում էյին զվարթ՝ անտառից,  
Ինչ որ ծով հայացքդ ղցեցիր գետին, —  
Դեմից հնչում էր սիմֆոնիան գետի:

ՈՐԸ ՄԹՆՈՒՄ Ե

Որը մթնում է լույսերը վառիր  
Ճակատ-ճակատի նստենք ու խոսենք.  
Քանի տարի է այն որից հոսել, —

Յերը Պերեկոպն էր մեր դեմ անառիկ  
Բարձրացել, վորպես քարակոփ Բաստիլ,  
Վոր մեր անվախճան կրակը սաստի:

## Ծ Ի Ա. Ծ Ա Ն Ի Ն Մ Ա Ն

Ծիածանի նման հորդ անձրևից հետո,  
Դու անցար, դու չկաս . . . Ե, թող այդպես լինի:  
Վարարել ե նորից վոսկեփրփուր գինին,

Յե՛վ չի թախծում նորից գանգրահեր պոետը,  
Վորի յերգի վրա դու խաչ եյիր քաշում  
Յե՛վ յերգերդ ծախում-մի անձրևային աշուն:

## Հ Ի Մ Ա. Գ Ի Շ Ե Ր Ե

Հիմա գիշեր ե, և ետաժերկան  
Արդեն ննջում ե գրքերի բեռից.  
Այսպես մի գիշեր մորուքով քեռին—

Ճերմակ մազերը սև գույնով ներկած  
Զրույց ունեցավ ինձ հետ դեմ ու դեմ.—  
Իսկ թե ի՞նչ ասաց . . . յես այդ չգիտեմ:

## Թ Ո Ղ Լ Ի Ն Ի

Թող լինի. կյանքից չեմ հրաժարվել  
Ե՛, քի՛չ Պերեկոպ կային մեր առաջ,  
Վորոնց մենք յերեկ արյունով առանք.

Ի՞նչու այսոր հեշտ թշնամուն տրվել,  
Քանի վոր նորից կարող ենք կովել,  
Կարող ենք առնել նոր դիրքեր արագ... •

## Ա. Խ, ՈՐԸ ԳՈՑՎԵՑ

Ախ, որը գոցվեց, յերկու խոսք ասիր,  
Պայքարում կոփված իմ հին բարեկամ,  
Թե ինչպես Շուլցը հարավից յեկավ,

Յեվ Բատկո-Մախնոն շարժվեց Իոնբասից,  
Իսկ Ղրիմն ինչպես ծանր նավերը —  
Քանդին, ավերին...

ՅԵՍ ՉԵՄ ԿԱՄԵՑԵԼ

Յես չեմ կամեցել, եպիգրամ թխել,  
Առանձին դժվար գործ չի, հավատա.  
Հայհոյել մարդկանց ու միշտ անկատար

Ժպիտը դեմքին և հայացքը խեթ,  
Մարդկանց մեջ իրեն զգալ և հանճար  
Յեվ ծիծաղելի և անպետք անչափ:

Ե՛Հ, ՅԵՐՊՆ Ի՞ՆՉ Ե ՎՈՐ...

Ե՛հ, յերգն ինչ ե վոր.— սատանի ծնուդ  
Իմ ծխամորճն եմ փնտոում աղամա,  
Իսկ մութը արդեն նստում ե կամաց...

Յես ձեղ, ի հարկ ե յերգով չեմ սնում.  
Դուք հաց եք ուտում, և առհասարակ,  
Նույնպես ձեր շորը թելով ե կարած:

ՔԱՄԻ ԲԱՐՁՐԱՅԱՎ

Քամի բարձրացավ և յերգդ դժվար  
Ծեծի փեղկերի կապույտ ապակին  
Յեվ հազիվ յեղնի ծանրության տակից,

Իրսում յերբ բուք է, ու ձյունը դժված  
Պարում է քամու ահեղ ձեռներին. —  
Յերանի պոետ, թե շնու մեռնեյիր...

ԾԻԾԱՂԵԼԻ ԲԱՆ

Ծիծաղելի բան. որորոցի մոտ,  
Մայրը զավակին սաղմոս չի մանում. —  
Վորտեղից գտնել այդպիսի մանուկ,

Վոր իր ծնուղը և թե խոսքը մոր,  
Վորպես անփոփոխ որենք համարի  
Յեվ հեռու նայի կյանքի կամարից:

ՅԵՍ ՎԱՐՊԵՏՈՐԵՆ ՉԵՌՔ ՔԱՇԻ ՍԻՐՈՒՑ

Յես վարպետորեն ձեռք քաշի սիրուց,  
Հիմա կծկում եմ գործած կտավս.  
Այսպես ինձ համար կրկնակի լավ ե.

Իսկ լուսաբացին աղջիկն այն գիրուկ  
Նայելով ինչ վոր մի ձեռագրի,  
Յելավ իր միակ ծաղիկը ջրի ...

ՎՈՐՊԵՍ ՀԱՅԱՑՔԸ ԻՎԱՆ ԳՐՈՂՆՈՒ

Վորպես հայացքը Իվան Գրողնու,  
Գիշերն ե նայում պատուհաններից. —  
Իզուր ես կարծում բարեկամ ... ներքի ...

Թեպետ հայացքս Փարիզ չի հասնում,  
Բայց այդ քաղաքը յես գիտեմ անշեղ,  
Վոր Յասենսկին այրեց մի գիշեր ...

ՎՈՐՊԵՍ ՎՈԴԻՍԵՎՍ

Վորպես Վորիսեսն իր փայտե ձիով  
Ձի կարող յելնիլ տանկի, գազի դեմ,  
Այդպես բարեկամ կյանքում հազիվ թե . . .

Այդ քո անձաշակ ու մերկ վրձինով  
Կարենաս փրկիլ կտավի վրա  
Ել հերոսացած պատկերը սրանց:

ԱՎԵԼԻ ԼՍՎ Ե

Ավելի լավ ե դուրս չդալ տանից.  
Այսոր փողոցում ցուրտ ե ու քամի.  
Յես քեզ չեմ տեսել այս քանի ամիս, —

Յեվ ազոթել եմ ինչքան — սատանին,  
Վոր մտքիդ վրա թախիծ չբառնա,  
Յերբ հեռու տեղից դու վերագառնաս:

ՍԱՏԱՆԱՆ ԳԻՏԵ

Սատանան գիտ է. դժվար թե լինի  
Մտքիս արխիվում մի ուրիշ պատկեր.  
Յերեկ, յերբ փոքրիկ շնիկը սատկեց... —

Յես գուռը գոցի: Հետո բանալին  
Փայլեց լույսի դեմ, արևի ներքո  
Յեվ սիրտս լի էր ինդուսթրիան յերգով:

ԹԻՍՎԱՐԵՑԻՆՔ ՄԵՆՔ ԱԼԻՔՆԵՐՈՎ

Թիավարեցինք մենք ալիքներով,  
Դու դեմս նստած իմ խելոք աղջիկ.  
Թող սերդ յերբեք-յերբեք չզաղջի—

Յեվ քո ժպիտը մոր նման ներող  
Թող իմ յերգի պես թանգ լինի սրտիս,—  
Դու դեմս նստած, դու իմ լսվ աղջիկ... —



ԼՈՒՍԻՆՆ ԻՀԱՐԿԵ ՓՈՂՈՎ ՉԵՍ ԳՆԻ

Սիրելի Գ. Մահարուն

Լուսինն ի հարկե փողով չես գնի,  
Այստեղ չի ոգնի քեզ վնչ մի բանկիր,  
Դու քո ուժերը տուր աշխատանքին

Յեզ քո արյան պես թող անգին լինի  
Մեր յերկրի ամեն խիճը հասարակ,  
Վորին մենք յերեկ արյունով առանք:

ԼՈՒՍԻՆՆ ԻՀԱՐԿԵ ՓՈՂՈՎ ՉԵՍ ԳՆԻ

Լուսինն ի հարկե փողով չես գնի,  
Այստեղ չի ոգնի քեզ վնչ մի բանկիր,  
Յեթե դու ձեռք ես քաշել քո կյանքից—

Յեզ քո պաշտած դառել ե գինին՝—  
Ապա թույլ տուր ինձ, իմ հին բարեկամ,—  
Հաղիվ թե լինես յերկու տարեկան:

Հ Ա Վ Ա Տ Ա, Մ Ա Ր Գ Ո Ւ Կ

Հավատան, մարդուկ որը ցերեկով  
Յոթերորդ հարկում լույսեր չեն վառի,  
Արի ցած իջիր մաքիդ կատարից,—

Վորը ճգնում ե ահա յերեք որ  
Յերկրից յերկինք կամուրջ կառուցի  
Յեվ միացնի կյանքը ցան ու ցիր...

Ա. Խ, ԻՆՉ ԵՍ ԱՐԵԼ

Ախ, ի՞նչ ես արել. նրանք հանեցին  
Սև ծովի տակից ինչ վոր Խերսոնես,  
Դու լուսադեմին գրեցիր Սոնետ...

Մոռացան կարծես անգամ տանեցիք,  
Վոր դու գիշերը ամբողջ ցանկացել —  
Քո մութ սենյակում Ամերիկա բացես:

Ծ Ի Ծ Ա Ղ Ե Լ Ի Յ Ե Ս

Ծիծաղելի յես դու անչնփի, անչնփի,  
Վոր մարդ ուղղում ե լաց լինի շիրմիդ. —  
Դժվար թե գտնել մի հաջող տերմինս,—

Վորը՝ և լինի թե մահ, թե հանճար,  
Նայած ինչպիսի ակնոցով դիտես  
Յեզ ինչ ուղղությամբ շարժես մատիտդ:

Պ Ժ Վ Ա Ր Ե

Դժվար ե դժվար, լուսարացի դեմ  
Յես վոչ վոքի շուտ չեմ հանում վոտի.  
Փողոցը արդեն մաքուր ե տոթից.

Յեզ յես կարող եմ համոզված դիտել՝  
Մեր լայն յերկրի պատուհանի տակ  
Ո՞վ ե նվագում մի կոտրած գիտար...

ԲՈՐԲՈՔՎԻ, Ե, ԹՈՂ...

Բորբոքվի, Ե, թնգ... իսկ մեր արյունը  
Մենք թանգ են ծախել տանկի, գազի դեմ.  
Դժվւնը գտնվի... — կյանքուս հազիվ թե՛

Ահառիկ ամբոց, վորը դժգունե  
Մեր պայքարատենչ համախոհ վողին  
Յեւ պարտությունը մեր կրծքին չոքի...

ԼՈՒՅՍԸ ԲԱՅՎՈՒՄ Ե

Լույսը բացվում ե. մազութոտ սիրեն  
Արդեն նստում ե քաղաքի վրա.  
Քո պոեմները անարյուն դրած

Վճչ մի ընթերցող կյանքում չի սիրել.  
Գրիք այդ մասին նորից մի պոեմ,  
Ո՛հ, դու նայիրյան ձանձրալի պոետ:

ԻՄ ԽԱՐԱԿՏԵՐՆ Ե

Իմ խարակտերն ե. յես պատուհանիս  
Փեղկերի վրա ճերմակ չեմ քաշում  
Յեվ սիրո համար դուրս գալիս կաշուց:—

Դե թո՛չ եք կարծում յերբ լուսին չանի,  
Գյուղացին դժվար անցնի անտառից  
Յեվ ջուրը դժվար ամառը սառի . . .

ԻՄԻՋԻ ԱՅԼՈՑ

Իմիջի ալոց. կամ Անդրեյ Բեյու  
Գրիչն ել ալստեղ անդոր կդառնա.  
Վոչ մի ուղեգիր հեռավոր Պառնաս

Յեվ վոչ մի գնով քեզ չի տանելու.  
Ինչպես չի յելնի Դանտեն տապանից,  
Վոր միտքդ նորից դժոխքը տանի . . .

ԳՐՄՈՒՄ ՉԱՆՁՐԱՇԵՇՏ

Վ. Սապուրայիև

Դրսում ձանձրաշնչոտ յերգում ե քամին,  
Հողմն ե սկսել կտտաղած սուրբալ.  
Վողջնայն հեռավոր ընկեր Սապուրա...

Քո յերկրում յեղա մի քանի ամիս  
Յեվ տեսա ինչպես քեռի Շեվչենկոն  
Յերգեր ե կոփել իր հատու զենքով:

ՀԱՅԵԼՈՒ ՄԵՋ ԻՐ ՊԱՏԿԵՐԸ ՏԵՍՆՈՎ

Հայելու մեջ իր պատկերը տեսնող  
Մանկան պես անմիա ժպիտ ես ծամում,  
Յերբ եվերեստը չի փլվում քամուց,

Կարծում ես անշուշտ կայուն ե քեզնով.—  
Յեվ քո քթանցքը Գանգես ե թվում,  
Եի, դու կորամեջք ու մաշված վհուկ:

ՎՈՐՊԵՍ ՆԵՉԱՅԵՎ

Վորպես Նեչայեվ, վորպես Բեյդեման  
Յեվ Կարակոզով, վորպես Չասուլիչ ...  
Որերի յերգը դու խանգով սուլիր,

Քո արյան գնով ստեղծիր թեմա՝  
Այ, նրանց նման, վորոնք կամերում  
Հեզնել են մահը դաժան ու ծերուկ:

ՄՈՒԹԸ ՆԱՅՈՒՄ Ե

Այազանին

Մութը նայում է դաժան ու ծանր,  
Հույսերն են իրենց ճերմակը մանում.  
Ինչ վոր մի մարդ է հեռվում մահանում,

Վորը կծկել է կյանքի կաժանը  
Յեվ մացառներն են ճամբին ծվատել,  
Բայց յերբեք, յերբեք նա չի վհատել ...

ՄՈՒԹԸ ՆԱՅՈՒՄ Ե

Մուժը նայում է դաժան ու ծանր,  
Լույսերն են իրենց ճերմակը մանուկ.  
Ինչ վոր մի մարդ է հեռվում մահանում

Իր կյանքից դժգոհ... յեվ հրացանը  
Նայում է փողով մութ, խորհրդամած,  
Մահվան ու փառքի ցնծության համար:

ԳԻՇԵՐՆ Ե ՆԱՏՈՒՄ

Գիշերն է նստում. մարդը նայում է  
Ապակու միջով թանձր խավարին.  
Ահազդու գեան է ազմկում վարից,

Յեվ մութը այնպես խիստ հմայում է.—  
Այսպիսի գիշեր,-մարդը լավ գիտե,  
Յերբ արնով առան նրանք այս գետը...



Ս Փ Ռ Ո Ց Ի Վ Ր Ա

Սփռոցի վրա մի կաթիլ թանաք  
Հաստատ կպել ե. հասարակ խնդիր.  
Մեկը պակասի յեթե մի գնդից,

Գունդը կարող ե կրկին ընթանալ,  
Առնել քաղաքներ ու բռնել գերի  
Յեզ ու յժ ու կյանք տալ քո թույլ յերգերին:

Վ Ի Շ Տ Գ Չ Ե Ս Թ Ա Ղ Ի Գ Ի Ն Ո Ւ Տ Ա Կ Ա Ռ Ո Ւ Մ

Վիշտդ չես թաղի գինու տակառում.  
Սմբողջ այս ե. գծվար քեզ դուր գա.  
Յերբ տայգաներում շաչում ե Պուրգան,

Քո նուրբ մշակած այդ փոքրիկ առուն  
Ո՞ւր ե համառում անեղ ցրտի դեմ,  
Քանզի անզոր ե, այդ ինքդ ել գլտես:

ՀԵՌՈՒ ՅԵՄ ԱՐԿԵՆ ՅԵՍ ԳՆՈՒՄ ԳՈՒՅԵ

Հեռու յեմ արդեն յես գնում գուցե,  
Փակենք այսքանով, մինչև առավոտ,  
Յերբ արեն յե՛նե կրկին փառավոր,

Դաշտերի բերքը մեր վոսկեզոծե,  
Վերմակը փռենք լույսի տակ նորից,  
Կապասեք մինչև լուսինը նորի . . .

ՎԵՐԻՅ ՄԱՂՈՒՄ Ե ԱՆՁՐԵՎԸ ԳԱՆԿԱՎ

Վերից մաղում ե անձրեք զանդադ,  
Վերջին մորմոքն ել քո հալվեց, ընկավ  
Հաստաբուն կաղնին իջնում ե ծնկան,

Ճակատին կնճիւ, հոգսերի քանդակ . . .  
Լուսե աչքերն են նայում դիմացից, —  
Այս դժվար յե՛ն ել, այս ել դիմացիր . . .

ԿՈՆԳՆԵԼ ԵՍ ՎՍՏԱՀ

Յե. Չարենցի

Կանգնել ես վստահ և քեզ ես հսկում.  
Կիրճերի խորքից գալարվող քամին  
Տուրիստի նման յեղնում ե Պամիր:—

Վորպես քնարը Իլյա Սելվինսկու  
Վոչ մի հանգի դեմ չի կախում գլուխ,—  
Այդպես քո յերգն ե հորիզոններ խլում ...

ՅԵՍ ՅԵՐԱԶՈՒՄ ԵՄ

Վ. Մայակովսկու

Յես յերազում եմ այդպիսի հանճար,  
Յես յերազում եմ արմավենու հասակ  
Յեվ գլավարին, վոր իբ խոսքն ասաց,

Մահու պես ազդու և ծանր անչափ,  
Վոր սերունդների սրտում կմնա,  
Վորպես արևը՝ չի մեռնում ընավ...

ԵՂ ՀԻՄՆԸ ՏՂԱ

Նվիրում եմ ինձ

Ե՛հ, հիմար աղա, լույսը բացվելուն  
Դու վնչ վոքի դեմ վոխ չես ունենա.  
Խմիր դու կյանքի ու մահու կենաց.

Գեղեցիկ մահը թանգ ե ապրելուց,—  
Ինչպես Լիբկնեխտ, ինչպես Չապայեվ,  
Վորոնց կրակը եպոխան պահեց...

ՔԱՄԻՆ ՀՌՀՌԱՅ

Նվիրում եմ ինձ

Քամին հոնոաց. լուսնի թևերը  
Քամվում են, վորպես նարնջի կաթիլ.  
Վողջնչն կյանք ու մահ, վողջնչն ու պատիվ,

Դուք բարձր եք կանգնած, վորպես Եվերեստ,  
Թող ինձ ուժ տրվի ու կորավ անափ,  
Գեղեցիկ մահով պագաթ բարձրանալ...

1932 թ. Աշուն  
Բագու

*ՖՐԱԳՄԵՆՏՆԵՐ*

Հ Ո Ր Յ Ե Վ Մ Ա Ն Կ ՈՒ Ք Յ Ա Ն  
Մ Ա Ս Ի Ն

1. Ով մնաց՝ մնաց: Յես դուռը գոցի,  
Տանիքի վրա գիշերն ե պառկում.  
Քամին ավոււմ ե ձյունը փողոցից,  
Յրտից չի փրկի վո՛չ մի վերարկու:  
Փոքրիկ շնիկն այն՝ հիմա թաթերին  
դունչը լուսնի դեմ աղոթք ե անում.  
«Յես քեզ կհիշեմ դեռ քանի՛ տարի,  
Դու իմ քաղցր ու թանկագին անուն»:
2. Ինչ վոր մի պոետ այսպես գրել ե  
Յեվ լույսն ե մանվել յերկնքի ծայրից,  
Ցած են սուրացել անտակ շրերը,  
Հողը մնացել սևավոր այրի:  
Յեվ հողի վրա կանգնած գյուղացին  
Նայել ե մարդկանց, վորպես բիրտ չարիք,  
Գոտկի մեջ խրած մի ժանգոտ կացին,  
Անտառ ե մտել վառելիք ճարի:
3. Կաղնի ծառերն են նայել դիմացից,  
Դարավոր բունը հողի մեջ խրած,  
Վորոնց չի ընկճի և վո՛չ մի կացին,  
Վորոնց չի այրի և վո՛չ մի կրակ:  
Մայրը խմոր ե հունցել խնամքով,  
Մագերի վրա արծաթն ե թեղել,  
Վոր չի խնդացել յերբեք իր կյանքում  
Յեվ իր «աստղը անբախտ ե յեղել»:

4. Տան շուրթի վրա մի խումբ մանուկներ  
 Չար—չար նայել են իրար պատառի,  
 Մինչև թանձրանար և մութը ընկներ,  
 Գյուղացի հայրը դառնար անտառից,  
 Գյուղացի հայրը դառնար անտառից  
 Խոփովիբ թախտի վերին անկյունում,  
 Մատների վրա հաշվեր անառիկ,  
 Թե մինչև գարուն ինչքան է մնում:
5. Թե մինչև գարուն ձյունը վերանա,  
 Դեռ ինչքան պետք է ալյուր, վառելիք  
 Յեվ մինչև դեղնեն արտերը կանաչ,  
 Պարտք անի հումից, հում խնդրի ելի:  
 Յեվ մանուկները ամեն շարժումին  
 Նայել են ծածուկ քուրսու արանքից,  
 Դրսում սուլել է ձյունախառ քամին,  
 Վարպես վոխակալ, կատաղած բանկիր:
6. Նա սյաշարել է անողոքաբար  
 Կեսից հողի մեջ թաղված տնակին,  
 Շղթա յե կապել, հարձակվել ապա, —  
 Լուսին չի յելել ամպերի տակից:  
 Յեվ առավոտյան վաղ լուսաբացին  
 Հայրը յելել է տանիքը քերի,  
 Ծուխն է բարձրացել տների ցածից  
 Յեվ ձուլվել արդեն հոգնած ամպերին:—
7. Վորոնք լացել են մինչև առավոտ  
 Տների վրա ու ճերմակ մանել:  
 Հայրը նայել է անհագ ծարավով,  
 Թե նոր գարունը յհրբ կժամանի:  
 Հեռու արտերին հայացքը հառել,  
 Վորոնք հագել են ձնե վերարկուն:

Մայրը ծածկի տակ թոնիր է վառել  
 Յեվ պատրաստել է ինչ վոր կերակուր:

8. Իսկ մանուկները կատվի հետ մեկտեղ  
 Միակ անկողնում քնել են խաղաղ.  
 Ծուխն է իր թաթը յերթիկից մեկնել,  
 Կծկվել, հոսել, գորշ, միապաղաղ:  
 Չարթնել են դանդաղ մի քանի խոխա,  
 Կատուն նրանց հետ միշտ հավատարիմ,  
 Մայրը նայել է հոգսի կատարից  
 Իր մանուկներին բարի, անփոխան:
9. Հայրը իջել է տանիքից ներքև,  
 Ձյունոտ վոտքերը խփել է գետին.  
 Գթի տակ ինչ վոր մի միտք է յերգել,  
 Վորպես մրմունջը սառցապատ գետի:  
 Հայրը յերգել է քթի տակ դանդաղ,  
 Ողում կծկվել է ծուխը չիբուխի.  
 Դեմքին շարվել է հոգսերի քանդակ,  
 Յերգը կախվել է հնամաշ չուխից:
10. Յեվ թշվառության բեռը շալակին,  
 Վոր ժառանգել է պապերի որից,  
 Նայել է նա թավ ունքերի տակից,  
 Հայացքը, վորպես անդունդը ձորի:  
 Հետո արել են նրանք նախաճաշ.  
 Հայրը շատ քիչ է ժպտացել նրանց.  
 Յերկար չիբուխը լցրել է հաճախ  
 Յեվ ծխել անցյալ իր բախտի վրա:
11. Ծուխը կառչել է գորշ առաստաղից,  
 Հետո յերթիկով ցնդել է ողում.  
 Հոգսն է ծանրացել արցունքով աղի

Յեզ կծկել ե նրանց, վորպես փաթաթուկ:  
Յեզ հույսը դրած քամու բերանում,  
Վորը վայել ե յերթիկի վրա,  
Հասակ են առել մի քանի մանուկ,  
Հասակ են առել, մեծացել արագ:

12. Յեզ, յերբ ճնհալն ե ընկել դաշտ ու ձոր,  
Զրհորդանները յերգել են կամաց,  
Հայրը նայել ե անհաշտ թախիժով  
Յեզ ժպտացել ե բարի, ակամա: —  
Վոր գարնան նորից դաշտ պիտի դուրս գա  
Յեզ նորից հողին կռիվը բանա,  
Վորպես գորշ հողի աննկուն վորսկան,  
Վոր տնքացել ե տարիներ անա:

13. Վոր տնքացել ե ուրիշի հողին,  
Մի պատառ հացի, ալյուրի համար  
Յեզ քաղցը վորպես ի՛նչնախառ ողի,  
Տան շուրթի վրա յերգել ե կամաց:  
Հողը ճեղքել ե մի հատիկ կանաչ  
Յեզ առուններն են արդեն վարարել:  
Հայրը մի գույգ պինդ տրեխ ե կարել,  
Վոր հողի կուրծքը արորով բանա ...

14. Յեզ դուռն ե ծեծել ինչ վոր մի մարդու,  
Անհանրեր կեցել մի պատասխանի ...  
(Հայրը ցորեն ե խնդրել այդ մարդուց,  
Այս տարի արտը վոր մենակ ցանի):  
Մարզը կանչել ե, ժպտացել նրան,  
Պայման ե կապել և չափել ցորեն:  
Այսպիսի պայման վորտեղ ե գրած  
Յեզ ով ե կյանքում այդպես ցնորել ...

15. Ուրիշ կերպ վոչինչ չես կարող անել,  
Մի կտոր հողդ մնում ե ամուլ ...  
Հայրը կեցել ե փաստի դեմ անել  
Յեզ հույսը տվել հողմահար քամուն:  
Այդպես թող լինի: Ցանելու արտը  
Յեզ սպասել ե յե՛նող կանաչին,  
Այս տարի մի քիչ վոր պարտքը հարթի  
Յեզ գյուղում իրեն մարդը ճանաչի:

16. Իսկ մանուկները արեկող մասում  
Արտեր են շինել, սպասել ջրի ...  
(Ե՛խ մանուկների խաղը իմաստուն  
Դժվար նկարի և վո՛չ մի գրիչ):  
Փոշին կախվել ե նրանց շեկ մազից,  
Վորպես խաղողի վոխկույզներ հասած ...  
(Մի լավ մանուկի մազերի մասին  
Այսպես գրել ե ինչ վոր վիպասան):

17. Անգամ այն ժամին, յերբ մայրը մեռավ  
Յերբ հայրը լացով ճանապարհ դրեց,  
Նրանք ականջից կախեցին կեռաս  
Յեզ սկսեցին իրարու հրել: —  
Խաղացին նրանք մինչև ուշ գիշեր,  
Փոշին մազերի խիտ վողկույզներին  
Յեզ հետո մեկը փայտե ձին քշեց,  
Տուն վերադարձավ «ահեղ մարտերից»:

18. Յեզ մանուկները մեկ-մեկ տուն յեկան,  
Հանցավոր դեմքով նայեցին գետին:  
Զիրուխից ծուխն եր բարձրանում յերկար  
Յեզ աղերսում եր ճրագը ձեթի:  
Հոր դեմքի վրա թախիժն եր թառել,  
Հիմա ուր գնա, հիմա ի՛նչ անի ...



Հայրը կիսում ե մի քանի բառեր,  
Արցունքը խեղդած դուրս գնում տանից:

19. Նրանք փնտռում են չոր հացի պատառ  
Յեվ նայում դռան՝ վերմակի տակից,  
Վերը առաստաղ, ներքևը հատակ,  
Քամին տանիքում մոլորված ֆաքիր:  
Քամին տանիքում նվում ե կամաց,  
Մեկը ծառի տակ լուռ հեկեկում ե,  
Նրանք հիշում են մորը ակամա  
Յեվ հայացքները արագ թեքում են:
20. Նայում են ահով իրարու դեմքի,  
Վերմակների տակ պահում են գլուխ,  
Հայրը ցցվում ե տան խարխուլ շեմքին,  
Հանում ե հագից ինչ վոր արխալուղ:  
Հետո մտնում ե նա յեւ անկողին  
Յեվ հեկեկում ե անկարող ցավից:  
Անխոնջ բանվորը և մարդը հողի,  
Թախիծը նստած աչքերում ծավի:
21. Յեվ ամբողջ գիշեր նա միտք ե արել,  
Մտքերը կծկվել կախվել են ուղից.  
Դաշտերի վրա մի դեղին արև,  
Արաբը հեացող ամառվա տոթին:  
Իսկ առավոտյան դաշտ ե դուրս յեկել,  
Սրտումը պահած սև վիշտը կնոջ.  
Կյանքը խճճել ե անհամար թելեր,  
Վորը հյուսել եր իր արյան գնով:
22. Նա ամբողջ որը քիտինք ե թափել,  
Արևն ե այրել յերես ու ճակատ,  
Արևն կյանքում վոր չի սարսափել

Իր գորությունը կյանքում հռչակած:  
Իր արտի վրա տվել ե կռիվ,  
Միայար յերգել հոգնության մասին,  
Հարավից ընկած լեռները ցրիվ,  
Հյուսիսի կողմից ձյունաբան Մասիս:

23. Մինչև յերեկո, արևը թառի,  
Մինչև աստղերը փայլեն կապույտից,  
Գիշերը իջնի սև ու մահառիթ  
Յեվ ամսւր նստի տների կույտին:  
Խավարը նայի գինոտ աչքերով,  
Խարխուլ պատերից ճպուռը յերգի,  
Գյուղը ծվարի ցնցոտիներով,  
Ունկնդիր նրա հոգեմած յերգին:
24. Հն. հայրը այդպես շատ ուշ դարձել ե  
Յեվ թափ ե տվել հողը արեխից,  
Հոգնած թիկնել ե մաշված բարձերին  
Յեվ մոտ ե կանչել ինչ վոր յերեխի.  
Նայել ե նրա աչքերի կապույտ  
Հատակում վառվող դեղնավուն բոցին,  
Վորպես հասկերն են շարքասյում կապում,  
Որորվում քամու թեթև շվոցից:
25. Նա փայփայել ե մաղերը նրա  
Յեվ գանգուրներն ե շոյել վերստին,  
Հոգու մեջ պահած չմարվող կրակ,  
Յեվ հաստատ մի հույս գալիք հանգստի:  
Հեռու հանգստի մի վառվող կրակ  
Պայծառ փայլել ե մանկան աչքերում.  
Արևը թափած դաշտերի վրա  
Յեվ արտը, վորպես անատամ ծերուկ:

26. Այսպես դիզվել են որերն իրար քով,  
Վորպես իր չուխի մաշված կարկատան  
Որերն անցել են մզլամած շարքով  
Յեվ նրա կյանքը հավետ անկատար ...  
Դեղնել են անդին արտերը կանաչ  
Յեվ մանգաղներն են փայլել լույսի տակ,  
Դաշտ է գուրս յեկել մի հնձվոր բանակ,  
Վոր իր ուժերը արտին, հասկին տա ...
27. Արտը քաղել է, ծեծել է կալուս  
Ու պարտքը տվել մնացել դատարկ,  
Տանը մի որվա գարեխառ ալյուր  
Յեվ կարի վրա մի քանի աթար ...  
Ելի հայացքը ուրիշի դռան  
Յեվ հույսը դրած յեկող գարուճքին,  
Չյունը սավանով տանիքին փռած  
Յեվ մանուկները կպած խարույկից:
28. Նույն տարիներն են հաջորդել իրար,  
Նույն առավոտն է բացվել ծիրանի,  
Չմեռը դաժան, ցուրտ ու անիրավ  
Յեվ մանուկներին-չոր հաց ու պանիր:  
Խարխուլ յերգիկից լուսինն է կաթել,  
Անհոգ քնել են մի քանի մանուկ,  
Հոգսն է ամրակամ խրճիթը պատել  
Յեվ անկյուններում իր ցանցն է մանում:
29. Յեվ չի խնդացել վոչ մի լուսե դուռ,  
Հոր կնճիռները վոչինչ չի բացել.—  
Արևը նստած բարձր գեներթում,  
Արևը դեղին ու նարնջաձև:  
Դաշտերի վրա թառամած վարդեր  
Ու խեղճությունը խուլ խրճիթներում,

Անխոնջ բանվորը ու հողի մարդը  
Քրտինք է թափել խիտ կնճիռներով:

30. Ուրիշի հողին կրկին ջանացել,  
Վոր որվա հացը արնով վաստակի ...  
Յեվ որ ու գիշեր քրտինք է թացել,  
Վողջ հույսը դրած իր կուռ դաստակին:  
Չուխից կախվել են անթիվ կարկատան,  
Դեմքի հողագույն խիտ կնճիռներում  
Աղի քրտինքն է փայլել անդադար,  
Հայրը ժրաշան ու արդեն ծերուկ:
31. Փոքրիկ շնիկն այն հիմա թաթերին  
Դունչը լուսնի դեմ աղոթք է անում,  
«Յես քեզ կհիշեմ դեռ քանի տարի  
Դու իմ քաղցր ու թանկագին աճուն» ...  
Այսպես է յեղել այդ մանուկթյունը ...  
(Մինչև արևը զարկել է սարին,  
Մինչև քանդվել է հին կյանքի հունը  
Յեվ ձյունն է փլվել բարձր կատարից:
32. Մինչև իմ յերկրում մի գորեղ բազուկ,  
Մի քրտնոտ բանակ տիրել է կյանքում  
Յեվ ազատվել են հայրերը բազում,  
Վորոնք անդադար քրտնել են անքուն):  
Որերից առաջ անթիվ մանուկներ  
Մեզ հետ միասին նայել են հացի,  
Մինչև թանձրանար և մութն ընկներ,  
Լուսինը յեղնե յերկնքի բացից:
33. Այդպես է ապրել ինչ վոր գյուղացի,  
Վորին յես այժմ կոչում եմ հայրիկ,  
Վորը խրել է գոտիլ մեջ կացին



Փռչող մաղերով, բարի, անփոխան . . .  
Փռքրիկ շնիկն այն հիմա թաթերին,  
Դունչը լուսնի դեմ աղոթք և անուամ. —  
Յես քեզ չեմ հիշի ել վսչ մի տարի,  
Դու իմ մանկության կարկատած անունս:

1932 թ. Սեպտեմբեր  
Բագու

## Հ Ե Ր Ո Ս Ս . Կ Ա Ն . Ճ Ի Ա . Գ Մ Ե Ն Տ

Կրեմլյան պատերն են ատամնավոր ցըցվել,  
Յերկինքը ծանրացել և քարե շենքերի վրա՝  
Գմբեթներն ահագին ծայրերը սըած  
Յեվ քամին արշավող կտուրներէց վեր:

Այս ժանիքավոր պարիսպների դեմ և  
Պայթել յերեվի առաջին արճիճե գնդակը,  
Այստեղով անցել և յերկաթե այն բանակը,  
Հոգում իր կարծրացած բետոն ու ցեմենտ:

Պաժարսկո-Մինինյան յերկու ասպետները  
Ահաբեկված նայել են այդ յերկաթե ուժին,  
Պայթել և գնդակների մուզիկան ժիր  
Յեվ շողացել են արնափայլ սրերը:

Մեկը քունքը բռնած սողացել և պատով  
Յեվ գիշերի պես իր մութ աչքերի ֆոնին,  
Ուրվականի նման սիլուետներ, և սինֆոնիկ  
Հնչունների թեվեր գիտակցություն պատող:

Նա հրացանն ամուր ձեռքերի մեջ սողած,  
Պատերի տակ պայթում եր գնդակ-գնդակի հետեվից.  
Յեվ ծանրացավ մեկը կարծես նրա թեվից  
Հրացանն սկսեց կուռ ձեռքերում դողալ:

Հարցականի նման մի արյունոտ յերիզ  
Նրա թեվից կախվեց պատի յերկայնքով:  
Լուսինը յերեսին իր ամպերի մութ քող  
Սառն աչքերով նայեց մութ գծերին:

Ձեռքը դողաց նրա, յեվ գնդակը փողով  
Վերջին, վերջին անգամ յերգով ողբ կիսեց:  
Հետո գանգի մեջ նրա ինչ վոր արնոտ լույսեր  
Յեվ սրտապայթ մի վոխ, մի մարմնացած բողոք:

Կրեմլյան պատերի ատամների խորշից  
Ուրիշ գնդակները խանդով բռնկվեցին,  
Իսկ հեռվում փշրվեց ինչ վոր մի քարե ձի  
Յեվ բարձրացավ քուլաներով ճերմակ փոշին:

Կարծես մի յերկաթե բուռնցք իջավ մեջքին,  
Յեվ կախվեց գլուխը պատից ներքև,  
Մեկը նրա կողքին կարծես տխուր յերգեց  
Դնեպրյան ջրի յեվ շախտերի մասին:

Յեվ քառավեց նրա միտքը մի վարկյանում,  
Ինչ վոր մեխեր սուր սողացին գանգից ներս,  
Հերտո... նրա համար ամեն ինչ հանգիստ եր,  
Կարծես լուել եր պայքարը մղած ազատության հա-  
նուն:

Մի կարմիր կետ բռնկվեց, մեծացավ-մեծացավ,  
Շախտյորների լույսերը գիշերվա խավարում,  
Վոր կետերի նման բռնկվում են, մարում,  
Թվում է արեվն ու աշխարհը հեռացած:

Իր մուրճերի զարկերը և խեղդող ածխածին  
Յեվ սարսուռով փշրվող ածուխի շերտեր  
Յեվ հանքից տուն դարձող շախտյորների յերթը,  
Վորոնք մուրճերը ձգելով պայքարի գնացին:

Դնեպրն է փշրվում պարոգների վրա,  
Ալիքների հորձանուտվող յերթը,  
Նենասխտեցն ինչպես անձեռնամուխ բերդը  
Որորում է ջրի կարնոտները ճերմակ:

Մթնում բռնկվում են կրակները,  
Այդ լույսերն են, այդ լույսերն են շախտյորական,  
Վոր խավարի, մթի վողուն տիրակալ,  
Այս գիշերում այսպես բռնկվել են:

Դես ու դեն պայթում է գնդակների մուզիկան,  
Ճարճատում են պատերը հոկտեմբերյան խանդով,  
Քոչադանոթն է թաթով անդունդ քանդում  
Յեվ արյունն է հոսում հուններով զիզգալ:

Նա ընկել է դեմքին և նրան թվում է  
Շեվչենկոյի յերգն է ազատության մասին,  
Ձապարոժյան կաղակները արշավում են  
Ամուր կպած մեջքին տեղական Պեզասի:

Нема на світі України,  
Немає другого Дніпра...

Այդ ձիերն են դուրում պիրի քարերի վրա,  
Յեվ այդ սուրն է ճոճում ատաման Կայինը:

Այդ Դոնբասն է շնչում ածուխի շերտերով,  
Դոմնաներն են հորդում յերկաթի արյունը,  
Այդ մահի վաստակած անգլուխ ուրուն է  
Դիակների վրա յեռանդով դեգերող:

Պատվեցին ինչ վոր թեվեր աչքերի դեմ  
Ուկրայնական դաշտի քամաղացների պես.  
Իր գնդակը այդպես յերբ ե վրիպել,  
Յերբ ե այդպես պառկած նա արյունը դիտել:

Մեկը դեմը յելավ, իր մանուկը կարծես,  
Յերկու կապույտ լճեր շեկ ունքերի տակին...  
Չեռքը սեղմեց կրկին հրացանի դաստակին,  
Սակայն ծակեց քունքը ինչ վոր մի բան կարծր:

Քամին եր պատերին քսվում բողոքարկու,  
Փողոցների յերթին գնդակը տիրակալ  
Վանականի նման սեվ վեղարը հազած —  
Գիշերն եր ծանրացած տանիքներին պառկում:

Իսկ նա վերջին հրաժեշտը տվեց կյանքին,  
Դոմնաներին, շախտին, ազատությանը,  
Վերջին անգամ ուզեց ձեռքը քունքը տանել,  
Վերջին անգամ փորձեց Շեվչենկոյին անգիր:

Սակայն ձեռքը ստոեց մնաց, արնոտ քունքին,  
Վորպես հարցականի յերկու ցցված մասեր...  
Գնդացիքը վրան մահվան քայլերդ ասեց,  
Թնդանսթը վորոտաց կրեմլի թիկունքից:

Դրսում գնդակն եր լոկ ձերբակալում:  
Յեվ բարիկազներն առնում եյին հետզհետե,  
Շարժվում եր բանակը մեր կուռ ու յերկաթե,  
Յեվ փողոցը յերգում եր Ինտերնացիոնալը:

\* \* \*

Վողջնայն այդ ձեռքին սեղմած քունքի վրա,  
Յեվ գնդակին նյն — փողոցում առաջին պայթած,—  
Արյունոտ մայթերին սայթաք առ սայթաք  
Յեվ հոմերական հատորներին դեռ չգրած:

1931 թ.

Մոսկվա—Դոնբաս

## Կ Ր Ե Մ Լ Ը

Այս Կրեմլն ե ահա...

Դարերի դեմ, վորպես անպարտելի վահան,  
Հաղթանակով փնտռն ու վեհությունը պահած,  
Այս Կրեմլն ե ահա:

Այս Կրեմլն ե ահա ծանրորեն նստած,  
Շուրջը ժանիքավոր պարսպական պատեր  
Իջած հողի կրճեքին անհաղթորեն, վստահ.

Այս Կրեմլն ե ահա, դեմը հրապարակ  
Յեվ բազմահարկ շենքեր, շուրջը ու կողերին,  
Վորոնք ամուր, վորպես անքաքտելի պարան  
Գրկել են Կրեմլը, և հիմքը հողե իր:

Այս Կրեմլն ե ահա գորշ պատերով նայում,  
Շուրջը, դեմը, վորպես խոռոչները գանգի,  
Վորը դեռ ապրում ե քարե հիմքով կայուն,  
Վորպես զոդանջ թափված կրեմլական զանգից:

Այս Կրեմլն ե ահա դմբեթները խաչած,  
Հեվում տանիքների անհարթ ֆոնին  
Յեվ յերկինքը վորպես լեղակագուշն լաչակ  
Ալիքվում ե դեմի կապույտ չորիզոնից:

Այս Կրեմլն ե; դեմը քարակառույց տներ,  
Փասազներին դեմքեր, կենդանու, մարդկային,  
Վորոնց ինչ վոր վարպետ արյունով ե հինիկ,  
Վորոնք մնացել են անհողորդ ու կայուն:

Վորոնք մնացել են և ապրել են դարեր,  
Տեսել են ժպտացող ու հողագուշն ձեռքեր  
Յեվ քամին ե նրանց շուրջն ու դեմքին պարել  
Յեվ զանգերն են դեմից ինչ վոր աղոթք յերգի:

Յերգել են լիաթոք հայացքները Հյուսիս,  
Կամխքացած ձեռքի պալատների մասին:  
Յեվ որհնել են ինչ վոր չեղած մի Հիսուսի,  
Վորը աշխարհ պիտ գա հրե վեղարն ուսին,

Վոր պետք ե յեղնե, կյանք տա մեռածներին,  
Հողագուշն դեմքերին ուրախություն ցանի  
Յեվ Մեծ Ովկիանոսի վերի ծերից  
Տայգաները մինչեվ դրախտավայր անի:

Ձանգերը յերգել են, որհնել են ժպիտով,  
Կամարներում կյանքն ե դանդաղորեն հոսել,  
Վորպես հոգսը դեմքին կնճիռներ ե կիտում  
Յեվ ձգում ե ճակատին ինչ վոր անհարթ շոսե:

Յեվ նայել ե հոգսը մտքի լուսամուտից,  
Թափանցել ե ներսի վոսկորները մինչեվ,  
Ինչպես բուքն հյուսիսի ձմռամուտին  
Տայգաներում անսանձ, ահագնորեն հնչե:

Պարգել են ձեռները խատաներից անդին,  
Բուքը վոռնացել ե հյուսիսային գոտում,  
Ձյան շեղջերն են անտակտ պարել ողում,  
Վոռնացել սրտապայթ սառուցային խանդից:

Յեվ Կրեմլը, վորպես անպարտելի կամար,  
Դեմ ե տվել կուրծքը կատաղի հողմերին,  
Խոռոչներով և մութ և ամպամած  
Հայացքել ե շուրջը,—աշխարհի կողմերին:

Այս Կրեմլն է ահա...  
Դարերի դեմ, վորպես անպարտելի վահան,  
Հաղթանակով փառքն ու վեհությունը պահած,  
Այս Կրեմլն է ահա:

Այս Կրեմլն է ահա, դեմը հրապարակ,  
Յեվ բազմահարկ շինքեր շուրջը ու կողերին,  
Վորոնք ամուր, վորպես անքակտելի պարան  
Պաշտպանել են նրան դարերի հողմերից:

Մի որ Հոկտեմբերյան մի ցուրտ գիշեր, քամին  
Յերբ բուքսիւր եր առել ձյունը պլոշչազի  
Յեվ դարձրել նրան անընկճելի Պամիր—  
Դրոշները յելան Կրեմլի ձակատից:

Յելան դրոշները հաղթ ձեռքերով բռնած,  
Ճակատներին, քունքին արյան բծեր,  
Քամին նրանց շուրջը անհուտորեն վռնանց,  
Փողոցներին, մայթին կատաղորեն ծեծեց:

Յեվ առաջին անգամ գորշ պատերի դիմաց  
Հայացքները արնոտ նրանք միտինդ արին,  
Մինչեւ վերջին շունչը չբառնան պայքարից,  
Մինչեւ պատռեն ամեն արյունառուշտ դիմակ:

Դողաց վերջին զանգը թույլ հարվածով հեծեց  
Յեվ կույր արխիտեկտորն իջավ յեկեղեցու բացից,  
Վորի աչքերն հանեց Իվան Գրոզնին,  
Վոր իր փառքին վճի մի փառք չհասնի:

Թնդանոթներ յելան Կրեմլի խորշերից,  
Հայացքները հյուսիս, հարավ ու արեւելք,  
Հազարները ընկան արյունոտ մայթերին,  
Շրթունքներում վրեժի ու ազատության յերգ:

Յեւ Կրեմլը նայեց խոժոռ խոռոչներով,  
Յերբ իր պատերի տակ փորվեց անթիվ շիրիմ,  
Վորոնք ընկան մարտում, վորպես անպարտ հերոս,  
յերկրին, հողին, կյանքին ազատություն բերին:

Վորոնք Ռազինյան որից մինչեւ ետոր  
Կյանք եյին դարբնում, հողի ու յերկաթի,  
Մինչեւ գիշերն իջնե՞ր ու յելներ Ծիւր—կաթին  
Յեւ յերկնքի հունով դանդաղորեն հոսեր:

Վերջին փողը փարվեց շիրիմների քարին,  
Դանդաղորեն մեռավ պատերի խորշերում,  
Բանակը դառնում եր հաղթական պայքարից,  
Դրոշները պահած Կրեմլացած ձեռքերում:

Այս Կրեմլն է ահա...  
Դարերի դեմ, վորպես անպարտելի վահան,  
Հաղթանակով փառքն ու վեհությունը պահած—  
Այս Կրեմլն է ահա:

Դեմի պլոշչազից հայացքները հյուսիս,  
Ասպետները Մինին—Պաժարսկու,  
Վոր ձեռքերը մեկնած լուռ Կրեմլն են հսկում  
Վորպես անմար կոթող „ՄԱՅՐ—ՌՈՒՍԻ“:

Նրանք ինչիւր տեսան իրենց կանգնած որից,  
Ասպետներն այդ խստիվ, քարե հայացքներով,  
Քանի ձեռք կամեցավ նրանց հիմքը փորի  
Վրեժի արյունը յերակներում:

Քանի անգամ նրանց պատվանդանի առջեւ  
Մերբ բարձրացան, իջան արնով հարբած,  
Քանի դիակ անշունչ ցուրտ քարերին կառչեց,  
Շրթունքներում հողի ու մայրենի բառբառ,



Յեւ տարածվեց քամին զրսում հյուսիսակամ,  
Փողին ցրեց արնոտ դեմքից պողշադի  
Յեւ յերկրի անծայր ու անպարտ ճակատին  
Դրոշմեց մի բուռնցք, մի ամբակուռ մկան:

Կրկին կամարները գմբեթները խաչած  
Յեւ զանգերի տոթը ճակատին Կրեմլի  
Յեւ հիշում ե նա իր պատմությունը հաճախ  
Իվան Գրոզնուց—մինչեւ Լենին:

Նայում են պատերը յեւ զորշ, յեւ զարական  
Յեւ թողնում են կրկին տարիները հետեւ,  
Վորպես իրար ձուլված մի ամբակուռ փական, —  
Այս Կրեմլն ե ահա—պարտված ու հաղթական:

Այս Կրեմլն ե ահա...  
Դարերի դեմ վորպես անպարտելի վահան,  
Հաղթանակով փառքն ու վեհությունը պահած,  
Այս Կրեմլն ե ահա:

Այս Կրեմլն ե ահա...  
Վոր կյանքում մի անզամ ցնցվեց հիմքով քարե,  
Տները խորհում էյին յերբ գլխահակ,  
Վորոնց դեմքին այնքան արնոտ սուր կր պարել:

Հենց դեմ ու դեմ նրանց, յերկու ասպետների  
Պղնձե փողերի ու պատվանդանի առջիվ  
Դրոշներ կախվեցին Կրեմլի պատերից:

Դրոշները, վրան սեւ յերիզներ նստած,  
Մազովված ձեռքերում դեմ հոսանքին քամու,  
Սակայն յերթն իջնում եր անվախորեն, վստահ,  
Խփում էյին խանդով շեկ փողերը ամուր:

Թափորը իջնում եր քարած պողշադով,  
Առաջից ծառայած դրոշների անտառ,  
Կնճիռները ձգված նրանց լայն ճակատում,  
Վորպես անձեռագործ քանդակ:

Վիշաք մեծ եր նրանց, կորուստն անդառնալի,  
Կրեմլի խորշերից կրկին թնդանոթներ  
Ահեղ վորոտումով պատիվ էյին տալիս  
Յեւ հայտնում աշխարհին նրա մահվան բոթը:—

Այն մեծ առաջնորդի վորը փոխեց կյանքում  
Հազարավոր որենք դարերից սահմանած,  
Սիբիրում, արսորում, գրեց, հուշեց անքուն  
Յեւ բանակներ հանեց բանակի դեմ անահ:

Հողին էյին հանձնում առաջնորդին իրենց  
Պղնձագույն մարդիկ, յեւ քունքերին վորոնց  
Հոկտեմբերը այնքան սպիններ եր դրել  
Հայացքներում կոփել չուզունացած կորով:

Պահակը պահում եր պատվով հրացանը,  
Կրեմլի խորշերից ձյունն եր ահեղ սուրում,  
Նա շնչում եր թեպետ կապարի պես ծանր,  
Յեւ քայլում եր թեպետ վորպես ձերմակ ուրու,  
Սակայն սրտում ուներ պահած մի խճր յերգում,  
Մի խոր հավատ ուներ դեպի առաջնորդը:

Յեւ Կրեմլը տեսավ նրա մահը ահեղ,  
Թափորները մարդկանց անվերջ, անհուսահատ,  
Իր զորշ հայացքներում մի պարտություն պահեց,  
Վորը մնում ե դեռ այս քարերին, ահա:

Մարդիկ արնով ներկված դրոշ ելին տանում,  
 Վոր պայքարում լինեն մարտիկ ու աննահանջ,  
 Ուղեղներում վորոշ մի Մեծ ՄԱՐԴՈՒ անուն,  
 Վորի գործն են վորպես դեվիզ տանում ահա:

Նայում են պատերը յեվ գորշ, յեվ դարական  
 Յեվ թողնում են կրկին տարիները հետեվ,  
 Վորպես իրար ձուլված մի ամբակուռ փական—  
 Այս Կրեմլն է ահա, պարտված ու հաղթական:

Այս Կրեմլն է ահա ...  
 Դարերի դեմ, վորպես անպարտելի վահան,  
 Հաղթանակով փառքն ու վեհությունը պահած,—  
 Այս Կրեմլն է, ահա:

1932 թ. Մոսկվա

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Յերգ յերկրին .

#### I. Յերգեր մահի մասին

	62
1. Մահ անմահություն . . . . .	11
2. Ազդարար . . . . .	12
3. Մահեր . . . . .	13
4. Յերաշխավորություն . . . . .	14
5. Հետքը . . . . .	15
6. Պահակը . . . . .	16
7. Բարեկազմի վրա . . . . .	17

#### II. Յերգեր կանանց մասին

1. Նամակ . . . . .	20
2. Որակարգից դուրս . . . . .	21
3. Կարոտ . . . . .	22
4. Նամակ . . . . .	23
5. Դու մեռար աղջիկ իմ . . . . .	25
6. Հուշեր . . . . .	26
7. Բամբասանք . . . . .	27
8. Յեվա . . . . .	28
9. Յելենա . . . . .	29
10. Անելյա . . . . .	30
11. Ռախա Ռիփիկ . . . . .	31

#### III. Խառը բանաստեղծություններ

1. Նախանձը . . . . .	37
2. Վերհուշ . . . . .	38
3. Ձոն . . . . .	39

4. Բաղձանք . . . . .	40
5. Ձոնը . . . . .	41
6. Անձնավերություն . . . . .	42
7. Փրկությունը . . . . .	43
8. Ճամբորդը . . . . .	44
9. Ուշացած յերգ . . . . .	45
10. Կամքը . . . . .	46
11. Ջանքը . . . . .	47
12. Իմ արժանիքը . . . . .	48
13. Յերգ վարպետին . . . . .	49
14. Մոռումհետև . . . . .	50
15. Խրախուսանք . . . . .	51
16. Յերգ մի յերգի մասին . . . . .	52
17. Յերգ ինձ համար . . . . .	53
18. Յերգ Գ. Մահարուն . . . . .	54
19. Հյուրը . . . . .	55
20. Յերգ գրված գիշերը . . . . .	56
21. Ինքը իրեն . . . . .	57

IV. Հասակ

1. Վորպես տարիներ մաշած վերարկու . . . . .	61
2. Որը մթնում է . . . . .	62
3. Որը մթնում է . . . . .	63
4. Ծիածանի նման . . . . .	64
5. Հիմա գիշեր է . . . . .	65
6. Թող լինի . . . . .	66
7. Ախ, որը գոցվեց . . . . .	67
8. Յես չեմ կամեցել . . . . .	68
9. Ե՛հ, յերգն ինչ է վոր . . . . .	69
10. Քամի բարձրացավ . . . . .	70
11. Ծիծաղելի բան . . . . .	71
12. Յես վարպետորեն ձեռք քաշի սիրուց . . . . .	72
13. Վորպես հայացքը ի վան Գրոզնու . . . . .	73
14. Վորպես Վողիսես . . . . .	74
15. Ավելի լավ է . . . . .	75
16. Սատանան գիտե . . . . .	76
17. Թիավարեցինք մենք ակիքներով . . . . .	77

18. Լուսինն իհարկե փողով չես գնի . . . . .	78
19. Լուսինն իհարկե փողով չես գնի . . . . .	79
20. Հավատա մարդուկ . . . . .	80
21. Ախ, ինչ ես սրել . . . . .	81
22. Ծիծաղելի յես . . . . .	82
23. Դժվար է . . . . .	83
24. Բորբոքվի է, թող . . . . .	84
25. Լույսը բացվում է . . . . .	85
26. Իմ խարակտերն է . . . . .	86
27. Իմիջի այլոց . . . . .	87
28. Դրսում ձանձրաշեշտ . . . . .	88
29. Հայելու մեջ իր պատկերը տեսնող . . . . .	89
30. Վորպես Նեչայիվ . . . . .	90
31. Մութը նայում է . . . . .	91
32. Մութը նայում է . . . . .	92
33. Գիշերն է նստում . . . . .	93
34. Սփռոցի վրա . . . . .	94
35. Վիշտդ չես թաղի գինու տակառում . . . . .	95
36. Հեռու յեմ արդեն յես գնում դուցե . . . . .	96
37. Վերից մաղում է անձրևը դանդաղ . . . . .	97
38. Կանգնել ես վստահ . . . . .	98
39. Յես յերազում եմ . . . . .	99
40. Ե՛հ, հիմար տղա . . . . .	100
41. Քամին հոհոաց . . . . .	101

V. Ձրագմեցներ

1. Հոր և մանկության մասին . . . . .	105
2. Հերոսական ֆրագմենտ . . . . .	117
3. Կրեմլը . . . . .	121



Baş mətbuat müdirligi müvəkkilliyi № 2153-Sifariş № 840  
Tiraz 1500. İstehsalata verilmiş 10/VII - 34. Səpə verilmiş 2/X-  
-34. Səpə listi 7¼. Kağız formatı 82X110.  
Azərbaycan mətbəəsində basıldı. Bakı, Əli-Bəyramov küçəsi,  
26-lar adına „Kitab sarayı“

«Ազգային գրադարան»



NL0359082

40311